եկեղեցիները վերաշինելու հրաման բերեց: Իսկ մունետիկը կանչում էր, թե շահի հրամանն է, որ քրիստոնյաները շինեն այն եկեղեցիները, որոնք քանդված են: Այս պատճառով բազմաթիվ տեղերում շինվեցին եկեղեցիներ թե նրա ժամանակ, թե նրանից հետո: (Սրանից) հետո արձակեց դեսպաններին:

Ապա եկավ մեծ իշխան Միրզա Իբրահիմը, որին կոչում էին Հաղրբեջան Վազրի, նստեց Երևանում, կանչեց մոտակա խաներին՝ Նախիջևանի, Պարտավի[164], Զակամի[165], Լոռու, Մակուի, Ակոռու[166], Սաղարակի[167], Ծարի[168] սուլթաններին: Սրանք եկան բերդը շինեցին եռարմ ավել ամուր, քան նախորդը: Նաև կամուրջը, որ բերդի տակ Զանգու կոչվող Հրազդան գետի վրա էր, սա ևս ավելի ամուր շինեցին, նաև խափանված առուները նորոգեցին և ջուր բերին Երևան քաղաքը: Ապա Երևանի կարգը ամեն մարմնավոր պիտույքներով հաստատվեց, որքան սա իշխում էր Երևանին:

ԳԼՈՒԽ ԾԲ
ԵՂԻԱԶԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱԼԸ

Երբ մեծ հայրապետ Հակոբը Կոստանդնուպոլսում հաստատվեց, կաֆայեցի Մարտիրոս վարդապետը, որ նրա բարեկամն էր ու Երուսաղեմում պատրիարք էր, մխիթարական նամակ գրեց Սուրբ Էջմիածին և հայտնեց նրանց, թե չլինի առանց այս կողմերին հարցնելու կաթողիկոս ընտրեք: Բայց ձեր գրությամբ հարցրեք սրանց՝ այսինքն Եղիազարին, որ ինքնագլուխ դարձել է կաթողիկոս, սպասում է լուռ՝ նստած Բերիա քաղաքում՝ այսինքն Հալեպում: Առ այս Սուրբ Էջմիածնում հավաքվեցին բոլոր վանքերի առաջնորդները, եպիսկոպոսները, վարդապետները, իշխանաշուք մարդիկ և նրան գրեցին: Նամակի մեջ գրել էին, թե քո սրբությունը (դու) հռոմկլայեցի լինելով՝ արժան է լինելու իր նախնիների շարքերում:

Եվ ընտրեցին Պետրոս անունով մի վարդապետի, որ Գողթան գավառի վերատեսուչ էր՝ ճարտար ու բանիսուն մի մարդ, ուղարկեցին նրա մոտ: Պետրոսը գնաց, նրան առավ բերեց Սուրբ Էջմիածին 1131 (1682) թվի օգոստոսի 14-ին՝ Աստվածածնի փոխման տոնին, Սուրբ Էջմիածնում նստեց կաթողիկոսության աթոռին: Սա մի

ճառաբան ու ճարտարաբան մարդ էր, բախտավոր էր ու համառ և ատենաբան (հրապարակով ճառող): Երբ սա դարձավ կաթողիկոս, բոլոր կողմերից եկան հնազանդվելու սրան: Եկավ նաև Աղթամարի կաթողիկոսը և օրհնություն առավ սրանից ու գնաց: Սա շենքեր կառուցեց Սուրբ Հռիփսիմեում[169]՝ գեղեցկաշեն տներ, բաց պատշգամբներ ու հովանոցներ, հաստատեց միաբաններ: Նույնպես և Սուրբ մայր Գայանեն[170] շրջափակելով պարսպեց, արևմտյան դռանը դրսի կողմից խորաններ շինեց և նույն տեղում՝ հյուսիսային կողմում պատրաստեց իր գերեզմանը, տնտեսատները, խցերը, հաստատեց միաբաններ, որ մշտապես ժամ ու պատարագ մատուցվեն:

Նաև կճյա գմբեթ կանգնեցրեց իջման տեղի վրա[171], հաստատեց սեղան՝ պատարագ անելու համար: Եկեղեցու երկու կողմը բարձրացրեց գետնից, ամբիոն շինեց և պատարագի սեղան կանգնեցրեց: Պատ շինեց եկեղեցու մեջ հարավային դռնից մինչև հյուսիսային դուռը, որպեսզի այնտեղ կանգնեն աղոթքի և ոչ թե ավագ խորանի առջև: Եկեղեցու տանիքում երեք տեղ կանգնեցրեց գմբեթներ: Նաև բարերարություններ արեց, քանզի Աթոռը պարտքեր ուներ, պարտատերերը գալիս պարտքերն էին պահանջում, իսկ նա ասում էր՝ ես չեկա պարտք տալու, այլ եկա շենքեր կառուցելու, և եթե ինձ պարտքերի համար ստիպեք, ես կգնամ այնտեղ, որտեղից եկա: Այս ասելով վերացրեց Աթոռի բոլոր պարտքերը: Այսպես մնաց խրոխտ, սարսափազդու իր կյանքի բոլոր օրերում: Մեռավ 1139 (1690) թվի օգոստոս ամսի 14-ին, ճիշտ այն օրը, երբ եկավ Էջմիածին՝ մնալով կաթողիկոս ութ տարի:

Նրանից հետո կաթողիկոս եղավ նրա ձեռնասուն աշակերտ Նահապետ Եդեսացին, որ այժմս է: Այս երկու կաթողիկոսների կողմից ժամանակին շինվեցին ու նորոգվեցին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ: Սրանք եկեղեցիների շինության համար թույլտվություն էին առնում իշխանից (խանից):

Բայց առաջին կաթողիկոսների կարգն ու կանոնը վերացավ Սուրբ Աթոռից ու բոլոր վանքերից նրանց թուլության պատճառով, որովհետև բոլոր առաջնորդները ըստ իրենց կամքի էին գործում, իսկ կաթողիկոսների փույթը չէր, քանզի իրենք ինչպես իրենց երկրում վարել էին, նույնը այստեղ էին անում: Նաև ինչ պակասու-